ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Գեղանիստ համայնք, ՀՀ Արարատի
մարզ, գ.Գեղանիստ 8փող. 4, Հեռ.
(093)706310 , gexanist-hamaynq@mail.ru

N 057/107
02 դեկտեմբերի 2016թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

ԿԻՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԹԻՎ 35-Ն,36-Ն:

ԱՌԴԻՐ 6 ԷՋ:

Համայնքի ղեկավար Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016 թվականի N 35-Ն

ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2016Թ-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ավագանու 30.11.2016թ-ի թիվ 14 նիստի օրակարգը

1. Գեղանիստ համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016 թվականի N 36-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 և 19 կետերի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 և 10-րդ հոդվածների պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գեղանիստ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝

հիմնական օբյեկտների համար

ա/ Մինչև 300 քառակուսի մետր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

բ/ Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

բա/ 201 – ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ

բբ/ 501 -ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25000 դրամ

բգ/ 1001 – ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 35000 դրամ

բդ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար ՝

գ/ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500դրամ

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն

չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության - 1500 դրամ

բ/ Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝

1/Ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ

5. Համայնքի տարածքում

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 20 դրամ մեկ քառակուսի մետրի համար

բ/ Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ

գ/ Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 30 000 դրամ

գա/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝8000 դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 000 դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25 000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները /սաունաները/ խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար

ա/ Առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ
բ/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 50 000 դրամ
գ/ Բաղնիքների /սաունաների / համար - 200 000 դրամ
դ/ Խաղատների կազմակերպման համար - 500 000 դրամ
ե/ Շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000 դրամ
զ/ Վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա/ Ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1000 դրամ
բ/ Թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2500դրամ
գ/ Այլ արտաքին գովազդի համար - 500 դրամ
դ/ մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ
ե/սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

7.1 Համայնքի տարածքում յուրաքանչյու ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

7.2 Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել իր կազմակերպության գովազդը,ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերես համապատասխան:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 դրամ

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներն օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ

10. Համայնքի տարածքում մարդդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ

11. Սույն հոդվածի 1-ին,2-րդ և 3րդ կետով սահմանված դրույքաչափերը /գյուղական համայնքներում/ կիրառվել են 0.5 գործակցով:

12. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աչուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 2000 դրամ

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու,շինարարության ավարտը փաստագրելու համար համայնքապետարանի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:

15. ՀԱմայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճար սահմանել՝

ա/Յուրաքանչյուր բնակչի համար-50 դրամ

բ/ Սպասարկման կազմակերպությունների համար-400 դրամ

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Աղիլխանյան